ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՈԿՏԻՍՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո,
եւ զփրկութիւնս քո տուր մեզ:
Որպէս զի մեծ են գործք քո Տէր,
եւ յոյժ խոր են խորհուրդք քո»:

ԿԻՊՐԻԱՆՈՍ

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 7-ի հինգշաբթի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի հրավերով, փոխադարձ այցելությամբ Հայաստան ժամանեց Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Թեկոտիստ Պատրիարքը:

Սրբազան Պատրիարքի շքախմբի մաս էին կազմում ռումինահայոց փոխառաջնորդ հոգեշնորհ Տ. Զարեհ Ծ. վարդապետ Պարոնյանը, Ռումինիայում << արտակարգ և լիազոր դեսպան Գևորգ Ղազինյանը, Ռումին Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ և աշխարհիկ անդամներ:

Հետևեսօրին օդանավը վայրէջք կատարեց «Զվարթնոց» օդանավակայանում, ուր Ռումինիայի Պատրիարքին դիմավորեցին Մայր Աթոռիս հոգևորականները՝ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ:

Դիմավորողների թվում էին նաև << նախագահի խորհրդական Վահագն Խաչատրյանը, << Կրոնից գործոց կոմիտեի նախագահ Լազար Սուքյանը և պաշտոնատար այլ այրեր:

Օդանավակայանի սպասասրահում տեղի ունեցավ մամլո հակիրճ ասուլիս, հինթացս որի Հայոց Հայրապետը, ողջունելով Թեոկտիստ Պատրիարքին, ասաց. «Այստեղ Աստվածաշնչական երկրի մեջ ենք գտնվում, Արարատի շուքին ներքև և նաև Սուրբ Էջմիածնի օրհնությանը մեջ: Մեր երկու Եկեղեցիները՝ Ռումանական Օրթոդոքս Եկեղեցին և Հայոց Առաքելական Եկեղեցին առավել քան 600 տարի շարունակական հարաբերության, եղբայրական գործակցության մեջ են եղել: Մենք Ձեր գալուստը կնկատենք նոր, հառաջաքայլ ընթացք մը՝ այդ բարեկամության զարգացման ճանապարհին: Ձեր առաջին այցելությունն է որպես պատրիարք Ռումանական Օրթոդոքս Եկեղեցու: Դուք ասկե տասներեք տարի առաջ գտնվել եք Հայաստանում, բայց այժմ այն Հայաստանը չէ, ինչ որ էր տասներեք տարի առաջ: Դուք գալիս եք մի ազատ ու անկախ հանրապետությամբ օժտված մեր երկիրը, և

ռումանական ժողովուրդը և Ռումեն Օրթոդոքս Եկեղեցին ամենաարագ գնահատողներից են եղել ազատության և անկախության: Մեր աղոթքը և մաղթանքը, որ Ձեր գալուստը դառնա օրհնություն մեր Հայրենիքի ու մեր Եկեղեցու համար»:

Պատասխան խոսքում Թեոկտիստ Պատրիարքը կարևորեց իր փոխադարձ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ հավելելով, որ այն կույզ փոխադարձ հարաբերությունների առավել ամրապնդման լավագույն երաշխիքն է ու հավաստիքը: Շարունակելով խոսքը՝ Ռումին Եկեղեցու առաջնորդն ի մասնավորի նաև շեշտեց. «Ձերդ Վեհափառություն, գերաշնորհ սրբազան հայրեր և պատվական անդամներ, աշխարհիկ և պետական ներկայացուցիչներ, Ռումեն Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը երջանիկ է այս այցելությամբ Հայոց պատմական հողը: Միշտ է, որ չեմ գալիս առաջին անգամ: Այս անգամ գալիս եմ որպես սպասավոր և պատրիարք Ռումեն Ուղղափառ Եկեղեցու: Գալիս եմ մի անկախ երկրից, որտեղ երիտասարդությունը և ժողովուրդը իր զոհաբերությամբ կերտեց մեր երկրի ազատությունը և անկախությունը: Գալիս եմ այստեղ Հայաստան, որը Ռումինիայում ճանաչված է իր հրաշալի ավանդապահությամբ, հայ հավատացյալների և հայ հոգևորականների հավատքով, քրիստոնեացման առաջին դարից սկսյալ, Սուրբ Գրիգոր Լուսավորչից հատկապես, մի Եկեղեցի և մի երկիր հարազատ, որպես բարեկամ Ռումանիո և ռումեն ժողովրդին: Այստեղ գալիս ենք այս անգամ որպես ուխտավորներ: Եվ որպես ուխտավորներ, գալիս ենք այստեղ՝ վերստին ծնրադրելու հայ ժողովրդի և Հայաստանի սրբավայրերի առջև, երկրպագելու և համբուրելու հայ ժողովրդի նահատակների աճյունները և ավելի ամրապնդելու մեր երկու Եկեղեցիների գործակցությունը և հարաբերությունները, մարտիրոսների ամուր հավատքով հաղթահարելու բոլոր տեսակի դժվարությունները: Որպես Ուղղափառ Եկեղեցի, Ռումեն Ուղղափառ Եկեղեցին և Ռումեն Ուղղափառ Պատրիարքությունը տեսնում է Ձերդ Սրբության՝ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի անձի մեջ եղբայրության և ծառայության մի առաքյալ ոչ միայն մեր երկու Ուղղափառ Եկեղեցիների, այլև մեր երկու հավատացյալ ժողովուրդների միջև, ովքեր հավատացած են մեր ապագային՝ հանուն Հիսուս Քրիստոսի:

Շնորհակալություն հայտնելով Ձերդ Սրբությանը, Ձերդ Վեհափառությանը հանուն իմ պատվիրակության, հանուն իմ շքախմբի և հանուն Ռումեն Եկեղեցու Սրբազան Սինոդին, հավատացյալներին և հոգևորականներին, ովքեր պահում են Ձեր այցելության գեղեցիկ տպավորությունը, ի սրտե ասում են Ձեզ՝ բարի տեսանք, ուրախությամբ և երջանկությամբ, որպեսզի Աստված մեզ օգնի ծառայելու, մի քայլ ևս անելու մեր համագործակցության ճանապարհին, որպեսզի մենք ի կատար ածենք Քրիստոսի պատգամը, որպեսզի Քրիստոսի Մարմինը լինի միշտ այնպես, ինչպես ժառանգեցին Սուրբ Առաքյալները»:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

«Զվարթնոց» օդանավակայանից ավտոմեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Այստեղ բարձրաստիճան հյուրին դիմավորեցին կանգերի տոնական ղողանջներով: Այնուհետև

«Հրաշափառ»-ի երգեցողությամբ հոգևորականների թափորը երկու Հայրապետներին առաջնորդեց դեպի Մայր Տաճար, ուր նրանք խոնարհվեցին Սրբություն Սրբոց Իջման Սուրբ Սեղանի առջև, ապա իրենց գոհաբանական աղոթքն առաքեցին առ Բարձրյալն Աստված: Որից հետո առաջնորդվեցին դեպի Սուրբ Խորան և դիմեցին ներկա հոգևորականներին ու հավատացյալ ժողովրդին: Նախ իր բարեողջույնի պաշտոնական խոսքն ասաց Սմենայն Հայոց Հայրապետը. «Այս վայրկյանը, Նորին Ամենապատվության այցելության առաջին պահը մենք կբանանք աղոթքով առ Քրիստոս, որ երևցավ այս երկրին վրա ասկե մոտ 1700 տարի առաջ, երևցավ մեր հավատո հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքին մեջ, և ինքն էլ բախեց այս գետինը ոսկի մուրճով, զոր քիչ առաջ Ձեզի հետ միասին մենք համբուրեցինք որպես երկնքի և երկրի հանդիպման վայրը Հայոց աշխարհում, Աստուծո այցելությունը մեր ժողովրդին Իր Միածին Որդույն՝ Հիսուս Քրիստոսի անձին մեջեն: Մենք այս պահուն կողջունենք Ձեր այցելությունը որպես նոր հառաջաքայլ մը դարավոր, վեցդարյա այն առաքելության, որ Ռումեն Օրթոդոքս Եկեղեցին և ռումեն ժողովուրդը, ինչպես նաև հայ ժողովուրդը և Հայ Առաքելական Եկեղեցին ապրել և մշակել են դարերի ընթացքում:

Այսօր մենք չենք կարող մոռանալ, որ Ռումինիան ողջ հայ ժողովրդի համար բարձր գնահատության արժանի երկիր է, որովհետև 600 տարիներե ավելի հայեր, որ ապրեցան այդ հողի վրա, իրենց զգացին սեփական տանը՝ ռումեն ժողովրդի ազնիվ վերաբերումին, Ռումանական Օրթոդոքս Եկեղեցու լայնախոհ և եղբայրական ջերմ ընդունելության շնորհիվ: Իսկ այս վերջին տարիներին առավել ևս ամրացավ Ռումեն և Հայ Եկեղեցու փոխհարաբերությունը, որովհետև մեր երջանկահիշատակ նախորդը՝ անմոռանալի Վազգեն Ա Կաթողիկոսը, Ռումինիայեն եկավ և ինքը հաճախ Ռումինիան ներկա ըրավ մեր Սուրբ Էջմիածնի կյանքին մեջ և միշտ սիրով կապված էր և ատոր համար մենք պարտք համարեցինք Ձեր այցելության առիթով, Եկեղեցում կատարված այս աղոթքից հետո, համախմբվել նրա շիրմին շուրջը և մեր աղոթքը մատուցել առ Աստված՝ նրա հոգիին խաղաղության համար: Մենք դեռ առիթներ պիտի ունենանք՝ խոսակցելու, խորհրդակցելու, մեր ժողովրդին հանդիպելու և նաև մեր վանքերն այցելելու: Այսօր ես միայն կուզեմ բավականանալ, ասելով, թե մեկ տարի առաջ, երբ ես այցելեցի Ձերդ Սրբությանը Ռումինական հողին վրա, հոկտեմբերի 27-ին 1995-ի, այնպես զգացեք Դուք, ինչպես զգացի ես, երբ ինքզինքս գտա իմ տան մեջ: Աստված զորացնե Ռումինական Օրթոդոքս Եկեղեցին, ռումեն ժողովրդին և Ռումեն պետությունը»:

Իր փոխադարձ խոսքում Ռումին Եկեղեցու հոգևոր պետն ասաց. «Ձերդ Սրբություն, գերապատիվ, գերաշնորհ սրբազան հայրեր, սիրելի ուսանողներ և սիրեցյալ, հավատացյալ ժողովուրդ.

Սրտանց երախտապարտ եմ Ձերդ Վեհափառությանը, այն ջերմ խոսքերի համար, որ ուղղեցիք Ռումեն Եկեղեցուն և ռումեն ժողովրդին : Սուրբ Լեռան սիրո խոսքն էր այն, որ մեր երկու Եկեղեցիները դարեր շարունակ փնտրեցին, որոնեցին փոխադարձ մերձեցման և միության ճանապարհին: Ռումեն Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը

գալիս է Հայաստանի նկատմամբ եղբայրական ջերմությամբ առլեցուն մի երկրից: Այս եղբայրությունն ու բարեկամությունը եղել են դարեր շարունակ: Իմ այցելությունը իմ նախորդների, նաև Սուրբ Սինոդի բարձրաստիճան հոգևորականների այցելության շարունակությունն է: Մենք գալիս ենք հյուրընկալվելու Ձեր ավանդապահ և Սուրբ Եկեղեցու հովանու ներքո այնպես, ինչպես որ այսօր կանչված են մեր Եկեղեցիները ժամանակի պահանջով: Գալիս ենք, որպեսզի մեր մտերմությունից, սիրուց և մեր երկու Եկեղեցիներին բաշխված Աստվածային շնորհից փոխանցենք նաև այլ ազգերին ու եկեղեցիներին:

Այսօրվա պահանջները թելադրում են մեր երկու Եկեղեցիների առավել մերձեցում, փոխճանաչողություն: Հայ Եկեղեցին իր դարավոր ավանդապահությամբ և հավատքով սեփական մասնակցությունն է բերում ընդհանուր Ուղղափառ Եկեղեցու հոգևոր մթնոլորտի հարստացմանը: Ռումեն Եկեղեցու սպասավորների ներկայությունն այսօր այստեղ երկու Եկեղեցիների մերձեցման, փոխադարձ սիրո և համագործակցության թելադրանքն է: Մեր հավատքը նույնն է, առաքելականությունը նույնն է: Մենք՝ թե՛ Ռումինիան և թե՛ Հայաստանը, ունենք մարտիրոսների հավատքը և առաքելականությունը: Նրանք զոհվեցին հանուն հավատքի՝ հայ և ռումեն ժողովուրդների հառաջդիմության ճանապարհին: Անցյալի այս մարտիրոսությունը մեզ ի մի է բերում, տանում դեպի մերձեցում: Մենք պարտական ենք Ամենայն Հայոց Հայրապետին, ում շնորհիվ այցելեցինք Հայաստան: Այցելության առաջին իսկ պահին, երբ ոտք դրեցինք Ձեր տունը, կամեցանք հիշեցնել Ամենայն Հայոց Հայրապետին, Հայ Եկեղեցու բովանդակ հոգևոր դասին և հայ ժողովրդին, որ Ռումեն Եկեղեցու հոգևոր դասն ու հավատացյալները չեն մոռանում Ձերդ Սրբության խոսքերը, որ արտասանեցիք անցյալ տարի Բուխարեստում:

Դուք Ռումինիա էիք այցելել մեր Եկեղեցու անկախության 110-րդ և Պատրիարքության 75-րդ տարեդարձերի առիթով: Մենք երախտապարտ մնացինք Ձերդ Սրբությանը՝ Ձեր առաքելական առաջին այցելության համար և հայտնում ենք մեր շնորհակալությունը: Այդ իսկ պատճառով մենք ահա գտնվում ենք այստեղ՝ պատասխան այցելությունը տալու Ձերդ Սրբությանը: Ես բացառիկ երկյուղով եմ արտահայտվում Աստվածարարյալ հազարամյա այս Սուրբ Խորանի վրայից:

Թույլ տվեք հայ հավատացյալներին փոխանցելու ռումեն հավատացյալների ուրախությունն ու բարեմաղթանքները: Փոխանցելով Ձերդ Սրբությանը, հոգևոր բարձրաստիճան դասին և բոլորին մեր, ինչպես նաև Ռումեն Եկեղեցու Սինոդի գնահատանքը, Ձեր նոր սերնդին՝ ուսանողությանը բաշխելով սերն ու գնահատանքը Ռումինիայի Հոգևոր Ճեմարանների ուսանողության կողմից՝ խնդրում ենք Ձեր հոգիներում պահել այսօրվա գեղեցիկ հանդիպման խորհուրդը՝ նույն հավատքով և նույն աղոթքով:

Թող Աստված օրհնի Ձերդ Վեհափառության նվիրական աշխատանքը որպես նախամեծար Աթոռի առաջին սպասավորի՝ ի փառս Աստուծո, ի փառս Հիսուս Քրիստոսի, մեր երկու Եկեղեցիների մերձեցման ճանապարհին: Այսպես թող օրհնի մեզ Բարին Աստված»:

Հանդիպում Հայրապետը Ռուսաստանի Ազգային ժողովի նախագահ Գ. Սելեզնյովի հետ

Հավարտ երկուստեք փոխանակված բարեմաղթանքների, հոգևոր հովիվները, միաբանության հետ համատեղ, հոգեհանգստյան կարգ կատարեցին երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի շիրմին և վերադարձան ծաղկեպսակ:

Հոգեհանգստյան կարգի ընթացքում

Այնուհետև հանդիսավոր թափորը բարձրաստիճան հյուրերին և Հայոց Հայրապետին ուղեկցեց դեպի Վեհարան, ուր, պատվիրակությունների անդամների ներկայացումից հետո, տրվեց սիրո ճաշ:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Այցելության երկրորդ օրը, նոյեմբերի 8-ի առավոտյան ժամը 11-ին, բարձրաստիճան հյուրը, Ռումին Եկեղեցու պատվիրակությունը, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, ինչպես նաև Մայրավանքիս միաբանների ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի Սրբոց նահատակաց հիշատակը հավերժացնող հուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի և խոնարհության տուրք մատուցելու հայոց Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

Այստեղ ծաղկեպսակ կետեղելուց հետո, նահատակների հիշատակն անմահացնող հուսկերժական կրակի առջև կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի խաղաղություն 1915 թվականի անմեղ նահատակների հոգիների:

Ծիծեռնակաբերդում

Այնուհետև Հայ և Ռումին Եկեղեցիների հոգևոր պետերն այցելեցին Ցեղասպանության թանգարան, տնօրեն Լավրենտի Բարսեղյանը մանրամասն տեղեկություններ հաղորդեց Հայոց եղեռնի, հուշահամալիրի և թանգարանի կառուցման, թանգարանում ցուցադրվող փաստաթղթերի ու վավերագրերի մասին:

Վերջում Սրբազան Պատրիարքը իր տպավորությունների մասին փոքրիկ գրառում թողեց պատվավոր այցելուների հուշամատյանում և բանավոր խոսքով հակիրճ ամփոփեց այդ պահի իր զգացումները:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ << ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ

Նույն օրը, ժամը 12-ին, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Պատրիարք Թեոկտիստին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառին և նրանց ընկերակցողներին ընդունեց << նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Պաշտոնական հանդիպման ընթացքում նախ խոսեց Թեոկտիստ Պատրիարքը՝ շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար և, մանրամասնելով այցելության նպատակը, նաև ընդգծեց, որ երկու ժողովուրդների անցած պատմական ուղում Եկեղեցին եղել է ոչ միայն հոգևոր հենակետ, այլև ազգային կարևոր դեր ու նշանակություն է ունեցել:

Իր հերթին Հանրապետության նախագահն ուրախություն հայտնեց այցելության համար և այն համարեց երկու ժողովուրդների միջև օրավուր խորացող բարեկամության, եղբայրության և փոխադարձ համագործակցության լավագույն դրսևորում: Վսեմաշուք նախագահը վերհիշեց նաև իր այցելությունը Ռումինիա և ապա Ռումինիայի նախագահ պարոն Իլիեսկուի փոխադարձ այցը Մայր Հայաստան:

Ապա Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը ևս իր շնորհակալությունը հայտնեց Հանրապետության նախագահին՝ ջերմ և սիրալիր ընդունելության համար:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ժամը 13.00-ին բարձրաստիճան հյուրերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, ընդունեց ՀՀ խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Հայտնելով իր ուրախությունը Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև խորհրդարան այցելելու համար, Աժ նախագահն այն նկատեց որպես ոչ միայն երկու բարեկամ պետությունների, այլև երկու քույր Եկեղեցիների համատեղ համագործակցության լիակատար և խոսուն վկայություն՝ բոլոր բնագավառներում: Պարոն Արարքցյանը հիշեց նաև երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որ գնալով առավել խորն արմատներ է ձգում:

Ջերմ ընդունելության և բարեմաղթանքի համար շնորհակալության իրենց փոխադարձ խոսքերն ասացին Թեոկտիստ Պատրիարքը և Հայոց Հայրապետը: Թեոկտիստ Պատրիարքը նաև շեշտեց, որ երկու ժողովուրդների եղբայրության ամենափայլուն դրսևորումը, որին այսօր հաղորդակից են նրանք, դարեր շարունակ հաճախակի կրկնված պալքարն է հանուն հավատքի: Նույնն են խնդիրները նաև այժմ՝ կույգ Եկեղեցիների, ինչպես նաև պետությունների՝ վերակարթոնք և վերակերտում, որն առավել է կարևորվում փոխադարձ այցելություններով, երկխոսությամբ:

Հանդիպման վերջում Սրբազան Պատրիարքը պարոն Արարքցյանին հանձնեց Ռումինիայի ազգային հերոս Ս. Գելասի Եպիսկոպոսի սրբապատկերը, գրառում կատարեց պատվավոր հյուրերի մատյանում:

***

Հետևեսօրին, ժամը 14.00-ին, բարձրաստիճան հյուրերի պատվին, «Արմենիա» հյուրանոցում տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռիս միաբաններ, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար այրեր:

***

Օրվա երկրորդ կեսին, ժամը 16.30-ին, պատվիրակության անդամներն այցելեցին Մատենադարան, մոտիկից ծանոթացան հայոց ձեռագիր մատյաններին, նրանց պատմությանը, սեփական ժողովրդի ճակատագրին հար և նման այդ անխոս վաղաղաթների անցած դժվարին ու անմեկնելի ուղուն:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում, ի պատիվ Թեոկտիստ Պատրիարքի, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևոր համերգ:

Ելույթ ունեցան Հոգևոր Ճեմարանի և Մայր Տաճարի երգչախմբերը:

Հընթացս հանդիսության, ողջույնի խոսքեր ասացին Մայր Աթոռիս դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոլատյանը և Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հարությունն Ծ. վարդապետ Նաջարյանը:

Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը, Թեոկտիստ Պատրիարքի գլխավորությամբ, մեծ հուզումով ունկնդրեց երգչախմբերի կատարումները:

Առավել տպավորիչ էին Մայր Տաճարի երգչախմբի մեներգչուհի միջազգային մրցույթների դափնեկիր Անահիտ Մխիթարյանի կատարումները:

Վերջում ներկա հոգևորականությանը, Հոգևոր Ճեմարանի և Հոգևոր դպրանոցների ուսանողությանը, ինչպես նաև ներկա հավատացյալներին իրենց հայրական օրհնանքը հաջորդաբար բաշխեցին Հայոց Հայրապետն ու Ռումինիայի Եկեղեցու առաջնորդը:

Դիմելով ներկաներին՝ Գարեգին Ա Վեհափառն ասաց. «Սիրելի հոգևոր եղբայրներ, հոգևոր Ճեմարանի և դպրանոցների շատ սիրելի աշակերտներ, նաև սիրելի հավատավոր ժողովուրդ.

Ես զգում եմ, որ ձեզնից յուրաքանչյուրի հիշողության մեջ և ապրումներում անջնջելիորեն պիտ արձանագրված մնա այսօրվան երեկույթը: Այս օրը և հատկապես այս երեկոն ուրիշ օր է, ուրիշ ապրումների հաճախանք է, ներմուծում է, ներգործություն է մեր անձնական կյանքերի մեջ: Ես եղել եմ Ռումինիայում: Երանի մեր ժողովրդի զավակները ճանաչեն նաև ուրիշ երկրների քրիստոնյաներին: Ես տեսել եմ նրանց հոգևոր, քրիստոնեական առողջ, կենդանի, աշխույժ կյանքը: Տեսել եմ նրանց վանքերը, 100-ավոր մայրապետներին, վանականությանը, Հոգևոր Ճեմարանների սաներին: Մի դպրանոցում՝ Բուքրեշի աստվածաբանական ճեմարանում, 350 համալսարանավարտ ուսանողների դիմաց եմ գտնվել սրանից 26 տարի առաջ: Եղել եմ Սիբիու քաղաքում: Այդտեղ, Սիբիու քաղաքի Տրանսիլվանիո հոգևոր թեմական առաջնորդների Հոգևոր Ճեմարանում տեսել եմ 400 համալսարանավարտ ուսանողներ, ովքեր հետևում էին Աստուծո խոսքի ճշմարտությանը և թարգմանն էին լինում այդ ճշմարտությանը Ռումինիայի ժողովրդի կյանքում:

Այսօր մենք մեզ երջանիկ ենք զգում, որ հարստանում, ուժեղանում ենք Ռումինիայի մեր եղբայրների և քույրերի քրիստոնեական հավատարմության այս գեղեցիկ վկայությամբ, որ մեզ է բերվում, մատուցվում Թեոկտիստ Պատրիարքի և նրան ընկերակցող հոգևոր և աշխարհիկ անդամների պատվիրակության շնորհիվ: Մենք աշխարհում ենք, բայց մենք աշխարհը չենք: Այս խոսքս չմոռանաք: Էլի ուրիշ եկեղեցիներ կան, ուրիշ երկրներ կան, ուրիշ ազգեր կան, որոնք ապրել են քրիստոնեական հավատքն այն հավատարմության զգացումով, որ մենք ենք ջանացել ապրել մեր մայր հայրենիքում, Մայր Հայաստանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջոցով:

Սիրելի Հոգևոր Մեմարանի և Սևանի ու Գյումրիի դպրանոցների սաներ, այսօր դուք տեսաք երգչախմբի ելույթը, ունկնդրեցիք այս խոսքերը. «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք փառօք Հօր»: Եսայի մարգարեի 6-րդ գլխի 6-րդ հատարն է սա: Բայց ի՞նչ իմաստ ունի, երբ արվեստով, երգի բազմաձայն մատուցմամբ մեզ է գալիս, մեր հոգիներն է կերպարանափոխում:

Ես այսօր հատուկ գնահատանք ունեմ մեր Հոգևոր Մեմարանի ուսանողներին, դասախոսական կազմին և տեսչությանը, հանձին Հայր Հայկազունին, որ այս երեկոն մեզի ընծայեցին հոգեղից և ներշնչողական երեկոն, հոգեղից, մեր հոգիները լցնող և մեր ապագայի կյանքը ներշնչող, ուղղող դեպի ապագա արևելող այս գեղեցիկ ելույթին առիթով: Ես ձեզ հետ շատ եմ խոսել: Այսօր ուզում եմ, որ իմ հոգևոր եղբայրը՝ Թեոկտիստ Պատրիարքն ինքը ձեզի ուղղի իր խոսքը, ձեզի՝ մեմարանականներիդ, հոգևոր դպրանոցների աշակերտներիդ, որովհետև նա էլ իր սիրտն ունի նոր սերունդին մեջ՝ Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու ծառայությանը պատրաստվող բազմահարյուր, եթե ոչ 1000-ից անցնող ուսանողների շարքերը: Ես շատ լավ բաներ իմացա նրանից իրենց Հոգևոր Մեմարանների զարգացման մասին և ուզում եմ, որ նա ինքն իր վկայությունը տա և իր հայրական հորդորն ուղղի մեր բոլոր մեմարանականներին: Մի բան չմոռանանք, սիրելի փոքրիկ եղբայրներս, մենք այստեղ Պատրիարք, Կաթողիկոս լինելուց առաջ, ձեզ նման սաներ էինք: Մեր Սրբազան Հայրերը, առաջնորդ հայրերը, ժողովրդին ծառայելու բարձր աստիճանին հասնելուց առաջ, գրասեղանի վրա աշխատող, Մատենադարանին մեջ աշխատող, ժողովրդի մեջ աշխատող անձեր էին:

Նա, ով իր կյանքն իր անձից դուրս կապրի, նա է, որ կմնա պատմության մեջ: Նա, որ ինքը իր անձին մեջ կապրի, ինքը իր անձովը կապրի, իր անձովը կվերջանա: Նա, որ իր անձը կբանա և ընդհանուր անձին՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն մեջ մասնիկ կդառնա, նա է, որ կհավերժանա: Այդ գեղեցկությամբն է, այդ գաղափարովն է, որ ես այժմ հրավիրում եմ իմ հոգևոր շատ սիրելի եղբորը՝ Թեոկտիստ Պատրիարքին, որ ձեզ ուղղի իր հայրական պատգամն իր այս շնորհաբեր այցելության առիթով ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և ի Հայաստան»:

Հայոց Վեհափառի խոսքին հաջորդեց Ռումինիայի Եկեղեցու Սրբազան Պատրիարքի խոսքը: Իր հուզումն արտահայտելով հանդիսության ընթացքում ունկնդրած խոսքերի և ելույթների նկատմամբ, Թեոկտիստ Պատրիարքն ասաց. «Սիրելի Վեհափառ Տեր, հոգևոր եղբայրներ, հոգևոր դպրանոցների սաներ և հավատավոր ժողովուրդ.

Ձեմ կարող այժմ մի քանի խոսքով արտահայտել այն, ինչ զգում եմ այս րոպեին, այս վայրկյանին այստեղ, որովհետև մարդ երբեք չի կարող արտահայտել հոգեպես և ներքուստ ապրածը: Հետևաբար, երաժշտության ճամփով այդ զգացումներն ավելի հնչտորեն են գալիս և հարստացնում մեր հոգեկան աշխարհը: Ահա թե ինչն էր պատճառը, որ Եկեղեցին ի սկզբանե գտավ երաժշտական արվեստի ճանապարհը՝ այս կերպ մարդուն մոտեցնելով Աստծուն: Այդ ճանապարհով մարդուն ցույց տվեց Աստվածային Արարչագործության գեղեցկությունը: Դա արեց

երաժշտության միջոցով, հրեշտակների երգակցությամբ, որովհետև այն ժամանակ, երբ մենք երգում ենք, ինչպես այս երեկո ունկնդրեցինք ուսանողների և երգեցիկ խմբի հոգևոր հմտերգը, այս կերպ նմանվում ենք հրեշտակներին: Սա Աստծուն փառաբանելու ճանապարհներից մեկն է:

Այժմ ձեր դպրանոցներում սովորում եք նաև այս ճանապարհը: Եկեղեցին երաժշտության ճանապարհով ցույց է տալիս այն, ինչ մենք չենք կարող հասկանալ և բացատրել ժողովրդին: Հետաքրքիր է այն վայրկյանը, այն րոպեն, երբ մարդ երգում է, հուզվում է: Քրիստոնյաները երգելիս արտասվում են, մանավանդ այն ժամանակ, երբ նրանք վերջին ճանապարհով ուղեկցում են իրենց հարազատներին դեպի անմահություն: Այս երևույթն իսկ հրավիրում է հեթանոսների ուշադրությունը քրիստոնեական կյանքի գեղեցկությանը, քրիստոնյայի կոչմանը: Իմ սիրելի եղբայրներ, դուք ևս կոչված եք ծառայելու Աստծուն, Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն: Այսպիսի ծառայողի կյանքը, որ նվիրված է Եկեղեցուն, պետք է լինի մնայուն մի փառաբանություն՝ ի փառս Աստուծո: Նույնն է նաև քրիստոնյաների կյանքը: Այն պետք է լինի Հիսուս Քրիստոսին նվիրված փառաբանություն:

Ինչպես այս երեկո տեսանք խմբավարների տաղանդը, նույն ձևով Եկեղեցու նկատմամբ պետք է լինի քահանան կամ հոգևոր հովիվը, որի մաս ենք կազմում մենք բոլորս՝ պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, բարձրաստիճան հոգևորականներ: Նրանք պետք է մեր հավատացյալ ժողովրդին երգերի և երգեցողության միջոցով ցույց տան ճշմարիտ ճանապարհը, կյանքի գեղեցիկ դրվագները, գեղեցկությունները: Ինչպես ուսուցանում է Սուրբ Ավետարանը, մենք ամենքս մի-մի հատիկ ենք, որ զարգանում ենք Աստուծո անդաստանում և կարողանում ենք հոգեկան զորությամբ հաղթահարել մեղքը: Եկեղեցու ցանկացած սպասավոր պետք է ունենա խմբավարի տաղանդ՝ առաջնորդելու իր հոտը, իր ժողովրդին, նրա անձնական հուզումից ելնելով, որպեսզի ոչ միայն ցույց տա իր տաղանդը, այլև բաշխի իր հավատացյալ ժողովրդին: Իմ կարծիքով որևէ բարեգործություն քահանայի կողմից, հոգևոր հովվի մոտեցումը իր հոտին, կապը հավատացյալների, անգամ անհավատների հետ գեղեցիկ երաժշտության իմաստ ունի՝ երաժշտական գեղեցիկ արժեքորմամբ, հրաշալի երգեցողությամբ, հրաշալի մեկնաբանությամբ:

Ս. Գրիգոր Նազիանզացին՝ Կապադովկյան երեք Հայրերից մեկը, մեզ՝ Սուրբ Սեղանի սպասավորներիս սովորեցնում է, թե ինչպես կարելի է հաղորդել մյուսներին այն, ինչ ինքդ չունես: Ինչպե՞ս կարող է մեկ ուրիշը երգել, երբ դու չես կարող երգել: Խոսքս վերաբերվում է քահանային կամ հոգևոր հովվին, նրա հովվական առաքելությանն իր հոտից ներս, իր Եկեղեցում: Ոչ բոլորս ունենք երգելու համապատասխան կարողություն կամ ձայն, բայց այս բնագավառի ծառայողից պահանջվում է, որ վերջինս քաջ գիտենա հոգեկան և հոգևոր իմաստով այս հարստությունը, որ գալիս է մեր դարերից: Հենց այս հոգեկան հարստությունն է, որ դուք այստեղ սովորում եք, ներառնում ձեր գիտակցության մեջ ու հոգիներում: Այստեղ ոչ միայն գործնական, այլև իր բովանդակ իմաստով պետք է սովորեք աստվածաբանությունը:

Իմ կյանքում հաճախ, չասելու համար մշտապես, գտնվել եմ իմ ուսանողության և աշակերտության դեմ-հանդիման, իմ Եկեղեցում տեսել եմ շատ տաղանդավոր, մանավանդ հավատավոր հոգևորականներ, ովքեր փայլել են ոչ միայն ուսանողության տարիներին, այլև այն պահին, երբ եկել են Սուրբ Խորանի առջև՝ կոչվելու հոգևոր ծառայության: Այս իմաստով է, որ ուզում եմ խոսք ուղղել նաև ձեզ՝ բոլորիդ: Օգտագործեք ուսանողության այս գեղեցիկ տարիները և մշտապես սովորեք՝ այս ձևով թեթևացնելու համար Ամենայն Հայոց Հայրապետի աշխատանքը, ինչպես նաև ձեր տեսչի՝ հոգեշնորհ Հայր Հայկազունի: Մի՛ մոռացեք, որ դուք այժմ գտնվում եք Առաքելական Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս նվիրական հարկի տակ: Այսօրվանից և այս րոպեից դուք պետք է գիտակից լինեք, որ գտնվում եք սրբազան մի մթնոլորտում, Ամենայն Հայոց Հայրապետի, գերապատիվ Սրբազանների շուրջ, ովքեր այսօր վկաներն են Եկեղեցու կյանքի և հարատևության ճանապարհին: Ձեր հոգևոր տեսչի խոսքը սրտիս շատ մոտ է այս վայրկյանին:

Ուր որ եղել եմ, միշտ բոլորին փոխանցել եմ իմ ողջույնի բարեմաղթանքը և բարի խոսքը: Բայց ձեր՝ ուսանողներիդ պատգամը, ողջույնը, նաև ձեր տեսչի խոսքը՝ ուղղված Ռումենն Եկեղեցու ուսանողությանն ու աստվածաբաններին, ես սիրով և յուրահատուկ ապրումով պիտի փոխանցեմ իմ բոլոր ուսանողներին: Երախտապարտ եմ ձեզ, որ դուք ինձ հանձնեցիք այս պարտականությունը՝ տանելու Ռումինիա: Այս մտքով, այս համոզումով, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պիտի օժտվի ապագայում նոր հոգևորականությամբ, նոր հոգևոր հայրերով, ովքեր պիտի սփովեն հայ ժողովրդի կյանքում՝ տանելով պապենական հավատքը այս Սուրբ հողից, այս Սուրբ վայրից, ի սրտե օրհնում եմ ձեզ: Թող բարին Աստված երկար կյանք պարգևի սիրեցյալ իմ եղբորը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Հոգևոր Ճեմարանի տնօրենին, դասախոսությանն ու ուսանողությանը:

Իմ սերը, գնահատանքը և օրհնությունը բոլորին: Աստված օրհնի ձեզ բոլորիդ: Ամեն»:

Հանդիսությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և «Հայրապետական մաղթերգ»-ով:

Վերջում Վեհարանի հյուրասրահում, ի պատիվ Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակության, տրվեց ընթրիք:

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ՝ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ

Այցելության երրորդ օրվա՝ նոյեմբերի 9-ի առավոտյան Ամենայն Հայոց Գարեգին Ա Հայրապետը և Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Թեոկտիստ Պատրիարքը, իրենց ուղեկցող հոգևորականների հետ, ներկա եղան Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցած հոգևոր համերգին, հավարտ որի երկու հոգևոր հովիվներն իրենց հայրական պատգամը հղեցին ներկա ժողովրդին:

Սպա Նորին Ամենապատվություն Թեոկտիստ Պատրիարքը, շնորհակալություն հայտնելով խմբավար Լորիս Ճգնավորյանին՝ օրվա

գեղեցիկ ելույթի, ինչպես նաև նրա հարենանվեր գործունեության առիթով, հանդիսավորությամբ նրան հանձնեց Ռումինի Ուղղափառ Եկեղեցու կողմից հատուկ աշխարհականների համար սահմանված պատրիարքական խաչը: Սենք, որ այս բարձր պարգևին արժանանում են աշխարհիկ այն նվիրյալները, ովքեր իրենց կյանքն արժևորում են հոգևոր բնագավառում կատարած հիշարժան գործերով:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ ՎԻՐԱՊ ԵՎ ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Հոգևոր համերգից հետո շքախումբը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ և թեմական առաջնորդների ուղեկցությամբ, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Թեոկտիստ Պատրիարքին առաջնորդեց դեպի մեր հավատո հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի հիշատակը հավերժացնող եկեղեցի՝ Խոր Վիրապ:

Վանքի մուտքի մոտ երկու Հայրապետներին ջերմ սիրով ու երկյուղածությամբ դիմավորեցին Խոր Վիրապի վանահայրը, ինչպես նաև ներկա հավատացյալները: Գեղեցիկ էր այն պահը, երբ Հայոց և Ռումինիայի Եկեղեցիների Վեհապետերն օրհնեցին այնտեղ իրենց պսակի խորհուրդը կատարող կույգին՝ մաղթելով ընտանեկան երջանկություն:

Այստեղ բարձրաստիճան հյուրին պատեհ առիթ ընձեռնվեց մանրամասն ծանոթանալ վանքի տարածքին, տեսնել այն վիրապի մուտքը, ուր 13 տարի բանտարկված էր մեր առաջին Հայրապետը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Այնուհետև մեծ Սրբի անունը կրող եկեղեցում, համատեղ աղոթքից հետո, ներկա հոգևոր դասին և հավատավոր ժողովրդին իրենց պատգամը հղեցին նախ Ամենայն Հայոց Հայրապետը, ապա Թեոկտիստ Պատրիարքը:

***

Հետևեսօրին պատվիրակությունն ուղղվեց դեպի հայոց ճարտարապետական մտքի անկրկնելի թռիչքը պարագրող եկեղեցիներից մեկը՝ Գեղարդավանք: Մուտքի մոտ Նորին Սուրբ Օծությանը, Թեոկտիստ Պատրիարքին, ինչպես նաև նրանց ուղեկցողներին մեծ ուրախությամբ դիմավորեց վանքի վանահայրը և բարիգալստյան իր խոսքն ասաց: Այստեղ նս բարձրաստիճան հյուրերին մանրամասն ծանոթացրին եկեղեցահամալիրի պատմությանը, վանական կառույցներին, որից հետո, իրենց գոհունակությունը հայտնելով առ Բարձրյալն այս հրաշք պահի համար, ի խորոց սրտի երախտիքի խոսք ասացին ներկաներին նախ Հայոց Հայրապետը, ապա Թեոկտիստ Պատրիարքը:

Երեկոյան շքախումբը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, երկու Հայրապետների նախագահությամբ, տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում, որին

մասնակցում էին Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը, Հայ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, թեմական առաջնորդները, Հոգևոր Ճեմարանի տեսուչը, Քրիստոնեական քարոզչության և դաստիարակության կենտրոնի տնօրենը, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկուստեք հետաքրքրող հարցեր, փորձ արվեց ուղիներ մշակել՝ դրանց իրականացման ուղղությամբ: Նշվեց նաև, որ այժմ առավել են կարևորվում երկու Եկեղեցիների երկխոսության պայմանները, արդի ծայրահեղ տարբեր դրսևորումների դեմ քույր Եկեղեցիների որդեգրելիք կեցվածքն ու վերաբերմունքի ճշտումը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

10 նոյեմբերի: Կիրակի: Մայրավանքում մատուցվեց հանդիսավոր Սուրբ և անմահ Պատարագ: Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռոս դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոլատյանը: Հընթացս մատուցվող Սուրբ Պատարագի, ներկա հավատացյալներին իրենց հայրական պատգամը հղեցին երկու Հայրապետները: Նախ խոսեց Ամենայն Հայոց Հայրապետը.

«Հավատացյալ և հավատարիմ ժողովուրդ Աստուծո.

Մեր սրտի խորքերեն փառք և գոհություն եմ ընծայում մեր Երկնավոր Հորը, որ մեզի շնորհեց այս ոգելից պահը՝ առ Աստված մեր հարուստ կապվածությամբը, երբ մենք հայ ժողովուրդի գերագույն սրբավայրին, Սրբություն Սրբոց Մայր Աթոռի Ավագ Խորանին վրա կանգնում ենք կողքին մեր սիրեցյալ եղբորը և Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու հոգևոր Հովվապետին՝ Թեոկտիստ Պատրիարքին և սրտերն իրար կապած, մեր հավատքը իրար շաղախած աղոթք ենք անում վասն խաղաղության աշխարհին, վասն հաստատության Եկեղեցվո և վասն սերտացման և զորացման մեր երկու Եկեղեցիների, երկու ազգերի և երկու պետությունների միջև: Ցանկանում եմ, որ բոլորդ էլ անդրադառնաք այս պահին, որ մեր ժողովրդի և Եկեղեցու շարունակական, հառաջատվական պատմության մեջ մի թվական է, որ պիտի միշտ հիշատակագրվի մեր ժողովրդի տարեգրությանց մեջ: Երեսուն տարիներ առաջ էր, որ այս բեմին վրա կանգնեց իր նախորդներից Ժուստինիան Պատրիարքը և իմ նախորդներից երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը: Երեսուն տարիներ ետքը այդ եղբայրության, փոխադարձ սիրո, հարգանքի, եղբայրական գործակցության ոգին Ավետարանից ներշնչված, մեր պատմություններից՝ Հայաստանի և Ռումինիայի պատմությունից թելադրված այդ ոգին նոր կյանք է առնում այսօր մեր նոր Հայաստանի մեջ, մեր ազատ ու անկախ հանրապետության այս օրերին: Եվ, հետևաբար, հանուն մեր ժողովրդին, հանուն մեր Եկեղեցուն, ես ողջունում եմ ամենաքաղցր սիրով Նորին Սրբության աղոթակցությունը մեզ հետ, ոչ թե միայն ներկայությունը, այլ աղոթակցությունը մեզ հետ:

Այսօր ես ցանկանում եմ, որ մեր ժողովրդի զավակներն իմանան, թե

Նորին Ամենապատվությունը, որ անավասիկ երեք օրերից ի վեր մեզ հետ է, տեսավ մեր ժողովրդի մեկ կողմից պատմական ժառանգության հարստությունը և մյուս կողմից մեր կյանքի նոր կենսայնության, նոր աշխուժության, քրիստոնեական հավատքին մեր Եկեղեցու ավանդության վերաբացվելու, վերստին հաղորդվելու և նրանով զորանալու շքեղ երևույթը: Նա եղավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Խոր Վիրապում, Գեղարդավանքում, ապա եղավ հոգևոր համերգում, հանդիպեց մեր Հանրապետության վսեմաշուք նախագահին, Ազգային Ժողովի նախագահին, և վաղը հանդիպելու է մեր նոր վարչապետին, մեր պետական ավագանիին, եղավ մեր հոգևորական եղբայրներին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, առաջնորդ սրբազաններին հետ: Երեկ մենք ունեցանք աշխատանքային մի հանդիպում երկու Եկեղեցիների գործակցությանը համար, նա եղավ մեր նոր սերնդի Հոգևոր Ծեմարանի սաներին հետ, և տեսավ նաև այն նոր շունչը, որ առավել ևս ծաղկում է մեր Հայաստան աշխարհում և ողջ Հայ Եկեղեցու կյանքում:

Այսօր, այս Ս. Պատարագին, ես ցանկանում եմ, որ մեր սիրեցյալ եղբայրը՝ Թեոկտիստ Պատրիարքը, իրեն ընկերացող հոգևորական և աշխարհական ներկայացուցիչների հետ միասին, երբ վերադառնա վաղը ի Ռումինիա, տանի այս ամբողջ ժողովուրդին անվերապահ սերը և իսկական սերը և գնահատանքը Ռումինիայի Եկեղեցուն, Ռումինիայի ժողովրդին և Ռումինիայի պետությանը, որովհետև, չմոռանաք երբեք եղբայրներ և քույրեր, որ աշխարհումս հազվագյուտ ազգերից մեկը եղավ Ռումինիո ժողովուրդը, որ դարեր շարունակ մեր ժողովրդին սիրով, եղբայրաբար ընդունեց, երբ նա հալածական Հայաստանից, Անի քաղաքից, և ապա 14-րդ դարին Կիլիկյան աշխարհից գնաց այնտեղ և մի տուն գտավ, երբ մարդիկ իր տունը քանդել էին և քանդում էին: Ես երկու անգամ եղել եմ Ռումինիայում, վերջին անգամ որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, և անձամբ տեսել եմ, վկան եմ եղել այդ սիրույն յայնախոհության, որ ցույց է տվել ռումինացի ժողովուրդը և Ռումինիո Օրթոդոքս Եկեղեցին հանդեպ մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին:

Այսօր խոսքը պատկանում է մեր սիրեցյալ եղբորը՝ Թեոկտիստ Պատրիարքին, որպես եղբայրական սիրո նշան, և որպես ճշմարիտ հավատքի, ուղիղ հավատքի, և այդ ուղիղ հավատքը քարոզելու իշխանության նշան եղող այս գավազանը ես, հանուն Մայր Աթոռին, նվիրում եմ իմ սիրելի եղբորը և նրա կատարած ուղղափառ քարոզությունը տարիներ շարունակ, և մանավանդ այսօր՝ իր Պատրիարքական գահակալության տասներորդ տարեդարձին առիթով, այդ իր սքանչելի ուղղափառ քարոզությունը ստանա մի հայկական գույն և զորանա ինքը, իրենց հոգևորականությունը, սինոդը և բոլոր ժողովուրդը Ռումինիայի մեջ:

Թող Աստված իրեն երկար կյանք տա և իր գործունեությանը՝ քեղուն արդյունավորում»:

Այնուհետև Վեհափառ Տերը Թեոկտիստ Պատրիարքին հանձնեց Աստվածային Ճշմարիտ հավատքը քարոզելու իշխանության խորհրդանիշ գավազանը:

Ապա իր փոխադարձ խոսքը ներկաներին հղեց Նորին Ամենապատվություն Թեոկտիստ Պատրիարքը.

«Ձերդ Սրբություն, գերաշնորհ, գերապատիվ սրբազան հայրեր և սիրեցյալ հավատացյալ ժողովուրդ,

Վեհափառ Տեր, թույլ տվեք մեր խորին շնորհակալությունը հայտնել Ձերդ Վեհափառությանն այն ջերմ խոսքերի համար, որ արտասանեցիք Ռումեն Եկեղեցվո և ռումեն ժողովրդի հանդեպ: Միշտ է, որ այսօր մի նոր էջ ենք արձանագրում մեր Եկեղեցվո պատմության մեջ: Բայց ավելի, քան երբեք, վերարժևորում ենք մեր փոխադարձ սերը ի Քրիստոս, Քրիստոսավանդ սերը, որ թողեց մեզ մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս: Սերը, որ իր մեջ ընդգրկում է երկինքը և երկիրը այն նպատակով, որ մենք չդառնանք մահկանացուներ: Այլ մենք՝ քրիստոնյաներս, մկրտված հանուն Սուրբ Երրորդության՝ Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո, լինենք անհաղթ, հաղթենք մահը, հաղթենք մեղքը, համբերություն ունենանք և կարողանանք հաղթանակել բոլոր տեսակի դժվարությունները այնպես, ինչպես մեր Տերը Հիսուս Քրիստոս հաղթեց մեղքը և մահը և պարգևեց մեզ անմահությունը հոգու:

Այսօրվա մատուցված Սուրբ Պատարագը, որուն ներկա ենք և ներկա ենք եղել մի քանի անգամներ, Հայ Եկեղեցվո Սուրբ Պատարագը իր մեջ ընդգրկված է, պարունակված է այն հրաշալի փորձը անմահության, զոր ժառանգեցինք մենք մեր նախնիներից՝ Սուրբ հայրերից: Այս մտքով և այս զգացմունքներով մենք հաճախ իրար ենք հանդիպում վանականներ, սպասավորներ և նույնիսկ հավատացյալներ, որ այս է նպատակը Եկեղեցվո երկրի վրա՝ ի մի բերելու և հավաքելու բոլոր նրանց, ովքեր հավատում են մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, իրար մոտեցնելու, և վերջապես իրար միացնելու միության գաղափարի սիրով, միության հանուն Սուրբ Երրորդության: Հոգևոր այս հարստությունը ես նկատել և տեսել եմ նախորդ իմ այցելության շրջանին, ինչպես և այժմ, այսօր այստեղ:

Հայկական վանքեր և եկեղեցիներ գոյություն ունեն Ռոմանիո երկնքի տակ Մոլդավիո իշխանապետ Ալեքսանդր Բարեմուտից սկսյալ, այսինքն՝ 1401-ից սկսյալ և այսօր տեսանք Երևանում, Մատենադարանում, կայսերական կոնդակը Ալեքսանդր Բարեմուտի, որով դրվում էր հայոց առաջնորդարանի հիմքը Սուչավայում, կարևոր մի փաստաթուղթ է ոչ միայն ձեզ համար, այլև մեզ՝ ռումինացիներիս համար: Այդ փաստաթուղթը ցույց է տալիս մեզ նույն տառապանքը, նույն չարչարանքը, որ ունեցավ հայ ժողովուրդը, նաև ռումեն ժողովուրդը: Իսկ այդ թվականից սկսյալ մինչև այսօր գոյություն ունի հայոց առաջնորդարանը, որի առաջնորդական փոխանորդ հայր Զարեհ ծայրագույն վարդապետ Պարոնյանն այսօր ընկերակցում է ինձ:

Սիրելի հավատացյալներ, շատ հետաքրքիր և շատ հուզիչ մի երևույթ է մեզ համար, և պատահական չէ մեր այսօրվա հանդիպումը Վեհափառ Հայրապետին հետ այս Սուրբ Խորանի վրա: Այն հաստատում է մեր դարավոր բարեկամությունը և եղբայրությունը: Մեզ պարտավորեցնում է մեր մարտիրոսների թափած արյունը՝ ռումեն և հայ: Վեհափառ Հայրապետը հուզումով արտահայտվեց այս մասին այստեղ: Հետևաբար այժմ և այս շրջանի ազատության պայմաններում, ավելի հաճախ ենք իրար հանդիպում, ավելի սրտաբաց Սուրբ Հոգու ներշնչումով և Սուրբ

Հոգու շնորհով տրված բոլորիս ազատության, անկախության պայմաններում: Չնայած որ անցյալի շրջանում, համայնավարության շրջանում այդ ճանր օրերին մենք դարձյալ կապված ենք եղել միմյանց հետ, մանավանդ նրանց համար, ովքեր մարտիրոսությամբ և զոհաբերությամբ ծառայում են մեր Սուրբ Եկեղեցիներում: Այնպես, ինչպես հանգուցյալ Վազգեն Ա Վեհափառը, այնպես, ինչպես Ռումեն հանգուցյալ հոգելույս Հայրապետը՝ Ժուստինիան Պատրիարքը, պահեցին, պահպանեցին և ջանք չխնայեցին հոգ տանելու և փառավորելու մեր Սուրբ Եկեղեցիները, որովհետև մենք հավասար ենք և միացած ենք Աստուծո սիրով: Մենք տեսանք այսօր արդյունքը երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի այն հզոր աշխատանքի՝ վանքերում և հատկապես ինչ որ տեսանք թանգարաններում հավաքված սիրով և հայ ժողովրդին անմահացնելու նպատակով: Վեհափառ Վազգեն Ա-ն իր առաջնորդության շրջանին Ռումինիայում կարողացավ առավել սերտացնել կապը հայերի և ռումինացիների և նույնն արեց նաև այստեղ իր հայրապետության շրջանին:

Այս երկու ժամանակակից մեծ Պատրիարքները, Հայրապետները Ժուստինիան և Վազգեն Ա, ցույց տվեցին քրիստոնյա աշխարհին, որ տառապանքը մեզ ավելի է միացնում, ավելի է իրար կապում, մեր կյանքը, մեր էությունը և մանավանդ վերածննդյան հիմքն է մեր այսօրվա նոր կյանքի, հոգեկան կյանքի իր բոլոր ելնէջներով՝ արձանագրելու համար իրենց տառապանքով, Քրիստոսի Եկեղեցու անմահությունը: Այս է այսօրվա ճշմարտությունը, սիրեցյալ հավատացյալ ժողովուրդ, և պարտականությունը հետայսու, որ դրվում է մեր առաջ իրար հետ հանդիպելու և իրար պատմելու և հաղորդակից դարձնելու ոչ միայն ուրախության, ոչ միայն տառապանքի, այլ նաև ընդհանուր մեր ծրագրին: Եկեղեցին մեր և ձեր կարիքն ունի: Եկեղեցին ձեր կարիքն ունի հետայսու ևս, ձեր հզոր նվիրումի, ձեր աշխատանքին՝ ի շահ մեր Եկեղեցվո: Եկեղեցին միշտ կարիքն ունի աղոթքի, հոգևոր խոսքի և տեսողության, նաև ձեր ներկայության: Գարեգին Ա Վեհափառի այցելությունն անցյալ տարի Ռումինիա բացառիկ ուրախություն պատճառեց բազմաթիվ ռումինացի հավատացյալների, ովքեր հավաքվել էին Մայր Տաճարի շուրջ, Տաճարի ամենամեծ Սուրբի՝ Սուրբ Դիմիտրեոսի անվանակոչության և տոնախմբության առիթով: Ե՛վ ցավի մեջ, և՛ տառապանքի մեջ մենք ստիպված ենք և մենք զգում ենք այդ պարտականությունը իրար հետ լինելու, ապա այսօրվա ազատության և անկախության պայմաններում պարտական ենք զգում է՛լ ավելի իրար հետ հանդիպելու, իրար հետ գործակցելու՝ հանուն միության, խաղաղության և քրիստոնեական սիրո:

Մենք այսօր անցորդ ենք: Մենք անցնելու ենք, բայց հավիտենապես մնում է Քրիստոսի Եկեղեցին: Ինչքանով որ մեր աշխատանքը ավելի լայնածավալ, ավելի հզոր է Եկեղեցու անդաստանի մեջ, դրանով մենք ավելի հավատացած ենք և ավելի նվիրված ենք այս հզոր աշխատանքին՝ ի փառս Հիսուս Քրիստոսի: Մենք ունենք բավականությունն ավետելու այսօրվա աշխարհին Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հավատը: Մանավանդ այսօրվա մեր պայմաններում, երբ ժողովուրդները փնտրում են այլ

ճամփաներ, այլ ուղիներ՝ իրենց կյանքը լուսավորելու համար, հայ և ռումեն հավատացյալներս ունենք բավականությունը ցույց տալու մեր ժողովրդին ճշմարիտ հավատը ոչ միայն մեր կյանքում, այլ դպրոցներում, մանուկներին և բոլոր նրանց, ովքեր գալիս են հավատքով Սուրբ Եկեղեցի՝ Սուրբ Եկեղեցուց հաղորդվելու համար: Այնպես, ինչպես մեր նախնիները հավատքով և նվիրումով և մարտիրոսությամբ պատվեցին և կառուցեցին սրբավայրերը վանքերի ու եկեղեցիների, այնպես, ինչպես նաև Ռումինիայում դատավորները, վեհապետները և հավատացյալ ժողովուրդը նույն ջանքերով, նույն նվիրումով կանգնեցրին և կառուցեցին բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր, մենք այսօր, չնայած այսօրվա պայմաններին, ունենք պարտականությունը մեր անունն արձանագրելու այդ հզոր աշխատանքում և շարունակելու այդ առաքելությունը այսօրվա մեր կյանքում: Տեսա Վեհարանում բարերարների, և դա օրինակ պետք է լինի բոլորիս համար՝ մասնակցելու մեր կարողությամբ Եկեղեցու շինության: Մեր Ռումեն Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը ձեր այս հրաշալի հայրենիքից մեկնում է ամենագեղեցիկ տպավորություններով, մանավանդ տեսնելով այս մեծ պատիվը, զոր այսօր ըրավ նորընտիր Հայրապետը Ամենայն Հայոց Գարեգին Ա-ն: Եղեք երջանիկ, սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, որ ոչ միայն դուք, այլև աշխարհում տարածված բոլոր հայերը տեսնելով մեծ շնորհներով և հարուստ աստվածաբանական գիտելիքներով օժտված նորընտիր Հովվապետին, սիրով շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամներով և հոգևոր դասով, ուսանողությամբ, դասախոսական կազմով ու հոգևոր դպրոցների սաներով: Այս ամբողջը թող լինի ձեզ համար ոչ միայն ուրախություն, այլև երախտագիտական զգացմունքների արտահայտություն: Մենք պարտավոր ենք պահելու և պահպանելու մեր դարավոր հավատքը և մեր դարավոր հոգևոր հարստությունները, որովհետև առաքելական հավատքի առջև այսօր կան որոշ նոր հարցեր, մարդիկ և կազմակերպություններ, ի հայտ են գալիս նոր կրոններ, հակառակ մեր առաքելական ավանդության և հավատքին, սակայն վստահ ենք, որ այս Սուրբ Խորանը, այս Սուրբ Սեղանը և Քրիստոնեական Եկեղեցին մեզ պիտի պահի և պաշտպանի այդ օտար ալիքների առջև:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայրներ, ձեզ բերում և հայտնում եմ Ռումեն Եկեղեցու Սուրբ Սինոդի և բոլորի կողմից երախտագիտության զգացումների արտահայտությունը, մեր սերը և համակրանքը ձեզ: Վստահեցնում ենք Ձեզ, որ Ձերդ Սրբությունը իր այցելությամբ այնտեղ թողեց մի անմահ էջ մեր Եկեղեցվո պատմության մեջ: Իսկ Ձեր ներկայությունը Ռումինիայում եղավ որպես արևի մի ցող, մի շող, որ եկավ լուսավորելու մեր աշխարհը: Եվ որպեսզի մի անգամ ևս արտահայտվի Ձեր սիրելի ներկայության զգացումը այնտեղ՝ Ռումինիայում, և մեր այցելությունը, մեր ներկայությունը այստեղ՝ այս Սուրբ Խորանի վրա, Ձեզ բերեցինք Սուրբ Անտիմոսի յուղաներկ սրբապատկերը որպես նվեր և գնահատանք, որ եղել է Ռումինիայում նահատակված մեծագույն մարտիրոսներից մեկը և եղել է միտրոպոլիտ առաջնորդ՝ իր կյանքը զոհելով հանուն քրիստոնեության: Այս Սուրբը

թող լինի մեզ միության, համագործակցության ոգեվիրա: Մեր սերը և համակրանքը Գերագույն Հոգևոր Խորհրդի հոգևոր և աշխարհիկ անդամներին, Վեհափառ Հայրապետի գործակիցներին, երգչախմբի անդամներին և բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունը բերեցին այս հրաշալի հանդիպմանը և այցելությանը ի Հայաստան աշխարհ:

Աստուծո օրհնությունը լինի ձեր վրա այժմ և միշտ և հավիտյան. ամեն»:

Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառը մեծ ուրախությամբ ընդունեց Ռումինիայի Եկեղեցու առաջնորդի նվերը:

Ա. Անտիմոսի սրբապատկերը հանձնելու պահին

Հավարտ Սուրբ Պատարագի, Վեհարանի հյուրասրահում տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում կույգ պատվիրակությունների կողմից փոխանակվեցին հուշանվերներ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԸ

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Նորին Սրբություն Թեոկտիստ Պատրիարքը, ինչպես նաև երկու պատվիրակությունների ներկայացուցիչները կառավարության ընդունելությունների տանը մասնակցեցին ի պատիվ Թեոկտիստ Պատրիարքի և նրա գլխավորած պատվիրակության կազմակերպված հատուկ ընդունելություն-հանդիպմանը, որին ներկա էին պետական բարձրաստիճան այրեր, դիվանագիտական, միջազգային կազմակերպությունների, բարեսիրական ընկերությունների և այլ հարանվանությունների ներկայացուցիչներ, ՀՀ հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, հոգևորականներ:

Ընդունելություն-հանդիպմանը ներկա էին նաև << վարչապետ Արմեն Սարգսյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, << նախագահի խորհրդական Վահագն Խաչատրյանը, << Կրոնից գործոց խորհրդի նախագահ Լևոն Սուջյանը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Հավարտ հանդիպման տրվեց պաշտոնական ընթրիք:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Այցելության վերջին օրը, նոյեմբերի 11-ի առավոտյան ժամը 10-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայոց Հայրապետը և Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու հովիվ Թեոկտիստ Պատրիարքը մասնակցեցին Ազգային Ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցած << նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի երդման հանդիսավոր արարողությանը: Համաձայն ավանդույթի, նորընտիր նախագահը երդման խոսքն արտասանեց Մատենադարանում պահվող 7-րդ դարի թվագրում ունեցող հայերեն հնագույն ձեռագիր Աստվածաշնչի վրա:

Օրհնության պահին

Հավարտ երդման, Հայաստանի Հանրապետության նախագահին օրհնեց Նորին Արբություն Գարեգին Ա Վեհափառը:

ԹԵՈԿՏԻՍՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ ԲԻԲԼԻԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԸ ԴԻՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

<< նախագահի երդման արարողությունից հետո, երկու Հայրապետներն իրենց շքախմբերի ուղեկցությամբ Մայր Հայաստան հուշարձան-կոթողի բարձունքից դիտեցին Հայաստանի Հանրապետու-

թյան գեղատեսիլ մայրաքաղաքի՝ Երևանի համայնապատկերը, կմայլվեցին քաղաքի ու Արարատյան դաշտի աշնանային անկրկնելի գեղեցկությամբ: Սպա Թեոկտիստ Պատրարքը, իր առջև դեմ-հանդիման տեսնելով Բիբլիական Արարատը, իր բերկրանքն ու տպավորությունը կիսեց ներկաների հետ. «Այն, ինչ որ զգում եմ այժմ, զգացել եմ նաև այն ժամանակ, երբ ընթերցել եմ Սուրբ Գիրքը: Այս ամենը նկարագրվել և պատմվել է Սուրբ Գրքում: Ջրհեղեղը, որ տարածվեց աշխարհով մեկ, արդյունքն էր այն չարիքների և մեղքերի, որ գործել էին մարդիկ: Աստծու հրամանով Նոյյան տապանն իջավ այս լեռան վրա, և մարդկությունը վերստին փրկվեց՝ փրկելով ընդհանրապես բովանդակ աշխարհը: Ահա Աստծու սիրո մի վկայությունը՝ տրված մարդկանց: Այս պատգամն այսօր սովորում ենք մենք Արարատից և Արարատը դիտելով, որպեսզի լինենք ավելի բարի, ավելի մոտենանք Աստծուն, ավելի խնդությունով ընկալենք Եկեղեցու ճշմարտությունը, որպեսզի մարդկության կյանքում չկրկնվի նույն ջրհեղեղը, որովհետև մարդկությունը, հարստանալով, կյանքից և իր նյութական շահերից ելնելով, շատ է փոխվել այսօր ևս: Մեր, նաև ողջ մարդկության միջից վերացնելու համար ատելությունը, հիշում ենք Աստծու դատաստանը:

Եկեղեցին պետք է ճշմարտացի լինի՝ հիշեցնելու մեզ բոլորիս, որ մարդիկ Աստծու ստեղծած էակներն են: Աստված մեզ փրկում է ամեն տեսակ չարիքից՝ դնելով Նոյյան տապանի մեջ, իսկ այդ Նոյյան տապանը այսօրվա մեր Մայր Եկեղեցին է՝ հիմնված Սուրբ Գրքի պատվիրանների վրա, հիմնված Սուրբ Հայրերի ավանդներին: Այս Նոյյան տապանը, որ է Եկեղեցին, մեզ կտանի դեպի փրկություն, դեպի Աստծու ճշմարիտ ճանապարհը: Այստեղից, ներկայությամբը Անհայտ զինվորի այս հրաշալի հուշակոթողի, միասին, Ամենայն Հայոց Հայրապետի հետ, մեր աղոթքն ենք վերառաքում առ Բարին Աստված, որ պահի, պահպանի մեր Մայր Եկեղեցիները, հավատքով ծառայենք նրան՝ բովանդակ աշխարհին փոխանցելով մանավանդ լավատեսություն, որովհետև Աստված մեզ բոլորիս սիրում է: Ինչպես ասում է Հովհաննես Ավետարանիչը, Աստված սեր է: Ոչ մի տեղ չենք կարող տեսնել Աստծո այս սերը ավելի գեղեցիկ և ավելի խորիմաստ, ինչպես տեսնում ենք այստեղ այսօր, այս հրաշալի բնության մեջ: Մարդկային բնությունն է ստեղծվել՝ փառաբանելու Աստծու փառքը, որպես ուղեղիշ հիշեցնելու միշտ, որ մենք պետք է մոտենանք Աստծուն, մոտենանք Աստծու գիտությանը և սրբությամբ ծառայենք մեր Մայր Եկեղեցուն: Աստված թող օրհնի, պահի և պահպանի մեզ բոլորիս: Ամեն»:

<< ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ

Նույն օրը, կեսօրին, երկու Հայրապետներին ընդունեց << նորընտիր վարչապետ Արմեն Սարգսյանը:

Ջերմագին ողջունելով քույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդներին՝ վարչապետը նշեց, որ հայ և ռուսին ժողովուրդները ճակատագրով շատ են նման միմյանց, իսկ նրանց դարավոր բարեկամությունն այսօր մի նոր շունչ ու փայլ է ստացել, որն իր ուրույն դրսևորումն է գտնում նաև տնտեսական բնագավառում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Թեոկտիստ Պատրարքն ի մասնավորի ասաց. «Պարոն Վարչապետ, հուզված ենք և շատ ուրախ այս րոպեին, որ Ռումեն Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունն այցելելով Հայաստան, հանուն Ռումինահայ գաղութի, իր ծրագրում ընդգրկում է Հայաստանում նոր ընտրված պարոն վարչապետի հետ հանդիպումը: Բովանդակալից և հրաշալի պայմաններ, որպեսզի մեր գործողությունը հոգևոր իմաստով լինի ու տարվի՝ ի շահ և համրապնդումն մեր երկու ժողովուրդների բարեկամության: Կարծում եմ, մեր հանդիպման կարևոր պահն է այժմ: Մեր երկու Եկեղեցիներն էլ հավատում և պատվում են սրբապատկերները՝ որպես մեր հոգիների զորավիգի: Ինչպես Ռումինիայում, այստեղ՝ Հայաստանում ևս տեսանք ու համոզվեցինք: Ուստի, որպես գեղեցիկ հուշ մեր այսօրվա բարեկամական հանդիպման, մեր Եկեղեցու Սրբերից մեկի սրբապատկերն եմ հանձնում Ձեզ, որ իր գործողությամբ և իր կարողությամբ սեր տարածեց ժողովուրդների միջև, սեր՝ հանդեպ հայրենիքը, սեր՝ հանդեպ ազգային Եկեղեցին: Ընդունեք այս նվերը որպես հայ և ռումեն ժողովուրդների բարեկամության արտահայտություն, ինչպես նաև հոբելյանական այս մեղալը, որ նվիրված է մեր Եկեղեցու անկախության 110-րդ տարեդարձին»:

Հուշանվերների փոխանակումից հետո պատասխան խոսք ասաց << նորընտիր վարչապետը:

ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Օրվա երկրորդ կեսին Նորին Սրբություն Գարեգին Ա Հայրապետը և Նորին Ամենապատվություն Թեոկտիստ Պատրարքն իրենց շքախմբերով վերադարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր << Պետական հեռուստատեսության համար ջուրջ 20 րոպե տևողությամբ հարցազրույց անցկացվեց:

Ապա Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, երկու Հայրապետներն իրենց հրաժեշտի գոհաբանական աղոթքն առաքեցին առ Ամենակարողն Աստված: Ողջերթի արարողության ընթացքում հրաժեշտի ջերմ խոսքեր փոխանակեցին երկու հոգևոր հովիվները, որից հետո եկեղեցական թափորի ուղեկցությամբ պատվարժան հյուրերն ուղղվեցին դեպի «Զվարթնոց» օդանավակայան:

Ճանապարհողների թվում էին << Կրոնից գործոց խորհրդի նախագահ Լապար Սուքյանը, << նախագահի խորհրդական Վահագն Խաչատրյանը, թեմական առաջնորդները. Մայր Աթոռիս միաբանները՝ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ:

Բարի ճանապարհ Ձեզ, Թեոկտիստ Պատրիարք: Թող Ձեր փոխադարձ այցելությունը դառնա հայ և ռումին ժողովուրդներին կապող հոգևոր այն կամուրջը, որով պիտի նրանք առաջնորդվեն դեպի Աստվածառաք Վարդապետը, դեպի հավերժություն:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ